

3421

СУЛГЬ

ЗК 33
b - 33



Պըսլետուաքներ բոլոր յերկրների, միացե՛ք

3K33 մց.
Ճ-33.

24 JUN 2005

հ. Ա Տ Ա Լ Ի Ւ 20 NOV 2009

ՃԱՌ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ
ԿՈԼՏՆՏԵՍՍԱԿԱՆՆԵՐԻ
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

1933 թ. գետնվարի 19-ին

ՊԵՏԱՐԱՏ—
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

3421

2005-PAL 2 3



3230


38

И. СТАЛИН

РЕЧЬ НА ПЕРВОМ
ВСЕСОЮЗНОМ СЪЕЗДЕ
КОЛХОЗНИКОВ-УДАРНИКОВ

Госиздат—

Отдел парт.-полит. литературы
Ереван



ՃԱՌ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԿՈԼՏՆՏԵ-
ՍԱԿՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱ-
ԿՈՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱ-
ՐՈՒՄ

1938 թ. փետրվարի 19-ին

Ընկեր կոլտնտեսականե՛ր և կու-
տնտեսուհինե՛ր: Յես չեյի մտածում
հանդես դալ ձեր համագումարում: Զե-
յի մտածում, վորովհետեւ ինձնից առաջ
հանդես յեկած հոետորների ճառեքում
արդեն ասված և այն ամենը, ինչ վոր
պետք եր ասել, — ասված և լալ ու դի-
պուլ: Արժե՞ արդյոք դրանից հետո ելի
հանդես դալ: Բայց քանի վոր դուք
սինդում եք, իսկ ուժը ձեր ձեռքին և
(յերկարատեւ ծափահարություններ), —
յես պարտավոր եմ յենթարկվել:
Միքանի խոսք կատեմ առանձին
հարցերի մտախ:

1

**ԿՈՂՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԻՆ
ՄԻԱԿ ՃԻՇՏ ՈՒՂԻՆ Ե**

Առաջին հարց—ճի՞շտ ե արդյոք այն
ուղին, վոր բռնել ե կոլտնտեսական
գյուղացիությունը, ճի՞շտ ե արդյոք
կոլտնտեսային ուղին:

Այս հարցը գատարկ հարց չէ: Դուք
կոլտնտեսությունների հարվածային-
ներդ, պետք ե վոր կասկածելիս չլի-
նեք, վոր կոլտնտեսությունները կանո-
նած են ճիշտ ճանապարհի վրա: Ուստի
և հնարավոր ե, վոր այս հարցը ձեզ
ավելորդ թվա: Բայց վոչ բոլոր գյու-
ղացիներն են մտածում այնպես, ինչ-
պես դուք: Գյուղացիների մեջ, այդ
թվում կոլտնտեսականների մեջ, դեռ
քիչ չեն այնպիսի մարդիկ, վորոնք
կասկածում են կոլտնտեսային ուղու
ճշության մասին: Յեվ դրանում վոչ
մի զարմանալի բան չկա: Իրոք, մար-

6

դիկ հարյուրավոր տարիներ ապրել են
հին ձևով, զնացել են հին ճանապար-
հով, կորացրել են մեջքը կուլակի ու
կալվածատիրոջ առաջ, վաշխառուի ու
սպեկուլանտի առաջ: Զի կարելի ա-
սել, թե այդ հին, կասկածալիստական
ուղին հավանություն եր գտնում գյու-
ղացիների կողմից: Սակայն, նա, այդ
հին ուղին, արորված, սովորական ու-
ղի յեր, և զեռ վոչ վոք իրականում
չի ապացուցել, թե կարելի յե վորեն
այլ կերպ ապրել, ավելի լավ ապրել:
Մանավանդ վոր բոլոր բուրժուական
յերկրներում մարդիկ դեռևս ապրում
են հին ձևով... Յեվ հանկարծ այդ
հին ճահճային կյանքն են ներխուժում
բուլեկիները, ներխուժում են փոթոր-
կի նման և ասում. ժամանակն ե թող-
նելու հին ուղին, ժամանակն ե սկսելու
ապրել նոր յեղանակով, կոլտնտեսա-
վարի, ժամանակն ե սկսելու ապրել
վոչ այնպես, ինչպես ապրում են ա-
մենքը: բուրժուական յերկրներում, այլ

7

ապրել նոր յեղանակով, արտելավարի:
իսկ թե՝ դա ինչ նոր կյանք ե, — ի՞նչ
իմանաս: Զլինի՞ թե դա հին կյանքից
ել վատթար դուրս գա: Համենայն
դեպս նոր ուղին սովորական ուղի չե,
տրոբված և դեռ ամբողջապես փորձ-
ված ուղի չե: Ավելի լավ չե՞ արդյոք
մնալ հին ուղու վրա: Ավելի լավ չե՞,
արդյոք, չտապել նոր, կոլտնտեսային
ուղուն անցնելու: Արժե՞ արդյոք ոխիլ
անել:

Ահա ինչպիսի կասկածներ են համա-
կում ներկայումս աշխատավոր դյուդա-
ցիության մի մասին:

Մենք պարտավո՞ր ենք արդյոք ցրել
այդ կասկածները: Մենք պարտավո՞ր
ենք արդյոք լույս աշխարհ հանել
դրանք, այդ կասկածները և ցույց տալ,
թե ինչ արժեն նրանք: Պարզ ե, վոր
պարտավոր ենք:

Հետեաբար, վերն առաջադրված
հարցը չի կարելի դատարկ հարց ան-
վանել:

Այսպես ուրեմն՝ ճի՞շտ ե արդյոք
այն ուղին, վորի վրա վոտք ե դրել
կոլտնտեսային դյուդացիությունը:

Ընկերներից վոմանք կարծում են,
թե անցումը դեպի նոր ուղին, կոլ-
տնտեսությունների ուղին, մեղանում
սկսվել ե յերեք տարի առաջ: Այս ճիշտ
ե մասամբ միայն: Իհարկե, կոլտնտե-
սությունների մասսայական կառուցու-
մը մեղանում սկսվեց յերեք տարի ա-
ռաջ: Այդ անցումը, ինչպես հայտնի
յե, նշանավորվեց կուլակության ջախ-
ջախումով և չքավորության ու մի-
ջակների միջինավոր մասսաների շարժ-
մամբ դեպի կոլտնտեսությունները:
Այս ամենը ճիշտ ե: Բայց, վորպեսզի
սկսելինք այդ մասսայական անցումը
դեպի կոլտնտեսությունները, պետք ե
վոր մեր ձեռքին ունենայինք միքանի
նախնական պայմաններ, առանց վո-
րոնց, ընդհանրապես ասած, մասսայա-
կան կոլտնտեսային շարժում աներեա-
կայելի յե: Հարկավոր եր ամենից ա-

ուաշ ունենալ Առրհրդային իշխանություն, վորն ուղնեց և չարունակում են ողնել դյուզացիներին՝ կանգնելու կուտանտեսությունների ուղու վրա։ Յերկրորդ, հարկավոր եր դուրս քշել կալվածատերերին ու կապիտալիստներին, խլել նրանցից զարծարաններն ու հոգերը և դրանք հայտարարել ժողովրդի սեփականություն։ Յերրորդ, հարկավոր եր սանձահարել կուլակությանը և խլել նրանից մեքենաներն ու տրակտորները։ Չորրորդ, հարկավոր եր հայտարարել, վոր մեքենաներից ու տրակտորներից կարող են ոդուլել միմիայն կոլտնտեսությունների մեջ միավորված չքաղլորներն ու միջակները։ Վերջապես, հարկավոր եր ինդուստրացման յննթարկել յերկիրը, կազմակերպել տրակտորային նոր արդյունահարերություն, կառուցել դյուզատընտեսական մեքենաշինության նոր գործարաններ՝ կոլտնտեսային դյուզացիությանն առաջորեն տրակտորներ ու մե-

քենաներ մատակարարելու համար։ Առանց այդ նախնական պայմանների չեղել կարելի մտածել կոլտնտեսությունների ուղին մասսայաբար անցնելու մասին, վոր սկզբել և յերեք տարի առաջ։

Հետեւաբար, դեպի կոլտնտեսությունների ուղին անցնելու համար հարկալոր եր ամենից առաջ կատարել չոկտեմբերյան հեղափոխությունը, տապալել կապիտալիստներին ու կալվածատերերին, խլել նրանցից հողն ու զործարանները և կազմակերպել նոր արդյունաբերություն։

Հոկտեմբերյան հեղափոխությամբ ել սկզբեց անցումը դեպի նոր ուղին, կոլտնտեսությունների ուղին։ Այդ գործընն սկսեց նոր ուժով ծավալվել միմիայն մի յերեք տարի առաջ, վորովհետեւ միմիայն այդ ժամանակներն իրենց ամբողջ ծավալով դրսողովեցին չոկտեմբերյան հեղափոխության անական արդյունքները, միմիայն այդ

ժամանակները հաջողվեց առաջ մղել
յերկրի ինդուստրացումը:

Ժողովուրդների պատմությունը քիչ
հեղափոխություններ չգիտե: Դրանք
հոկտեմբերյան հեղափոխությունից
տարբերվում են նրանով, վոր նրանք
բոլորն ել միակողմանի հեղափոխու-
թյուններ եյին: Աշխատավորների շա-
հագործման մի ձևը փոխարինվում եր
շահագործման մի այլ ձևով, բայց շա-
հագործումն ինքը մնում եր: Մի տե-
սակի շահագործողներն ու կեղեքիչները
փոխարինվում եյին մի այլ տեսակի
շահագործողներով, ու կեղեքիչներով,
բայց շահագործողներն ու կեղեքիչներն
իրենք մնում եյին: Միայն Հոկտեմբե-
րյան հեղափոխությունն եր, վոր իրեն
նախատակ դրեց—վոչնչացնել ամեն մի
շահագործում և վերացնել բոլոր և ա-
մեն տեսակի շահագործողներին ու կե-
ղեքիչներին:

Ստրուկների հեղափոխությունը լիկ-
վիդացիայի յենթարկեց ստրկատերերին
12

և վերացրեց աշխատավորների շահա-
գործման ստրկատիրական ձևը: Բայց
նրանց տեղը նա դրեց ճորտատերերին
ու աշխատավորների շահագործման
ճորտատիրական ձևը: Մի տեսակի շա-
հագործողները փոխարինվեցին մի այլ
տեսակի շահագործողներով: Ստրկատի-
րության ժամանակ «որենքն» ստրկա-
տերերին թույլ եր տալիս սպանելու
ստրուկներին: Ճորտատիրական կարգե-
րի ժամանակ «որենքն» ճորտատիրական
թույլ եր տալիս «միմիայն» վաճառե-
լու ճորտերին:

Ճորտ դյուղացիների հեղափոխու-
թյունը լիկվիդացիայի յենթարկեց
ճորտատերերին և վերացրեց շահա-
գործման ճորտատիրական ձևը: Բայց
նրանց տեղը նա դրեց կապիտալիստնե-
րին ու կալվածատերերին, աշխատա-
վորների շահագործման կապիտալիստա-
կան ու կալվածատիրական ձևը: Մի տե-
սակի շահագործողները փոխարինվեցին
մի այլ տեսակի շահագործողներով:

Ճարտարիքական կարգերի ժամանուկ
«որենքը» թույլ եր տալիս վաճառել
ճորտերին։ Կապիտալիստական կարգերի
ժամանակ «որենքը» թույլ ե տալիս
«միմիայն» դործաղբկության ու աղքա-
տացման, ավերման ու սովամահության
մատնել աշխատավորներին։

Միմիայն մեր խորհրդային հեղափո-
խությունը, միմիայն մեր Հոկտեմբե-
րյան հեղափոխությունը հարցը դրեց
այնպես, վոր վո՛չ թե մի տեսակի շա-
հաղործողները փոխարինվեն մի այլ
տեսակի շահաղործողներով, վո՛չ թե
շահաղործման մի ձեւը փոխարինվի մի
այլ ձեռով—այլ արմատախիլ արվի ա-
մեն մի շահաղործում, արմատախիլ
արվեն բոլոր ու ամեն տեսակի շահա-
ղործողները, բոլոր ու ամեն տեսակի
հարուստներն ու ճնշողները, թե՛ ճնե-
րը, թե՛ նորերը։ (Յերկարատև ծա-
փահարություններ)։

Ահա թե ինչու Հոկտեմբերյան հե-
ղափոխությունը նախնական պայման ու

անհրաժեշտ նախադրյալ ե, վոր գյու-
ղացիներն անցնեն նոր, կուտնառային
ուղին։

Ճի՞չտ վարվեցին արդյոք դյուզա-
ցիները՝ սպազմանելով Հոկտեմբերյան
հեղափոխությունը։ Այո՛, նրանք ճիշտ
վարվեցին։ Նրանք ճիշտ վարվեցին,
վորովհետեւ Հոկտեմբերյան հեղափո-
խությունը նրանց ոգնեց իրենց ուսե-
րից զեն չարտելու կալվածատերերին
ու կապիտալիստներին, վաշխառունե-
րին ու կուլակներին, վաճառականնե-
րին ու սպեկուլանտներին։

Սակայն դա հարցի միայն մի կողմն
է։ Վանդել կեղեքիչներին, վանդել կալ-
վածատերերին ու կապիտալիստներին,
սանձահարել կուլակներին ու սպեկու-
լանտներին—այդ շատ լավ է։ Բայց
այդ քիչ է։ Ճին կապանքներից վերջ-
նականապես աղատազրվելու համար
բավական չի լոկ ջախջախել շահաղոր-
ծողներին։ Դրա համար հարկավոր ե
նաև կառուցել նոր կյանք; կառուցել

այնպիսի կյանք, վորը հնարավորություն տա աշխատավոր գյուղացուն բարելավելու իր նյութական ու կուլտուրական դրությունը և վեր բարձրանալու որեցոր, տարեցտափի: Դրա համար հարկավոր ե նոր կարգեր հաստատել էյուղում, կոլտնտեսային կարգեր: Դա հարցի մյուս կողմն ե:

Ինչո՞վ են տարբերվում հին կարգերը նոր, կոլտնտեսային կարգերից:

Հին կարգերում դյուղացիներն աշխատում եյին ջոկ-ջոկ, աշխատում եյին հին պապենական յեղանակներով, աշխատանքի հին գործիքներով, աշխատում եյին կալվածատերերի ու կապիտալիստների, կուլակների ու սպեկուլանտների համար, աշխատում եյին՝ ապրելով կիսաքաղց ու հարստացնելով ուրիշներին: Նոր, կոլտնտեսային կարգերում դյուղացիներն աշխատում են միասին, արտելով, աշխատում են նոր գործիքների՝ տրակտորների ու գյուղատնտեսական մեքենաների ողնու-

թյամբ, աշխատում են իրենց համար և իրենց կոլտնտեսությունների համար, ապրում են առանց կապիտալիստների ու կալվածատերերի, առանց կուլակների ու սպեկուլանտների, աշխատում են նրա համար, վոր որեցոր բարելավեն իրենց նյութական ու կուլտուրական դրությունը: Այստեղ, հին կարգերում, —կառավարությունը բուրժուական ե և նա պաշտպանում ե հարուստներին՝ աշխատավոր գյուղացիների դեմ: Այստեղ, նոր, կոլտնտեսային կարգերում, —կառավարությունը բանվորա-դյուղացիական ե և նա պաշտպանում ե բանվորներին ու գյուղացիներին՝ բոլոր ու ամեն տեսակի հարուստների դեմ: Հին կարգերը տանում են դեպի կապիտալիզմ: Նոր կարգերը՝ դեպի սոցիալիզմ:

Ահա ձեզ յերկու ուզի, կապիտալիստական ուզին ու սոցիալիստական ուզին, դեպի առաջ—դեպի սոցիալիզմը

ուանող ուզին և դեպի հետ—դեպի կտ-
ոլիտալիզմը տանող ուզին :

Կան մարդիկ, վորոնք կարծում են,
թե կարելի յի վոտք գնել ինչ-վոր մի
յերբորդ ուղիք։ Այդ յերբորդ ուղուն,
վորը հայտնի չե վոչ վոքի, տասնձնա-
պես սիրով կառում են այն միքանի
տասնակող ընկերները, վորոնք զեռ
լիովին չեն համոզվել կոլտնտեսային
ուղու ճշտության մեջ։ Նրանք ուղում
են, վոր մենք վերադառնանք հին կար-
դերին, վերադառնանք միանձնյա տնտե-
սությանը, բայց տուանց կալիտալիստ-
ների ու կալվածատերերի։ Ընդվորում
նրանք ուղում են, վոր մենք թողնենք
«միմիայն» կուլակներին և այլ մանր
կապիտալիստներին, վորպես մեր տըն-
տեսական կարգերի որինական յե-
րեռութ։ Իրոք դա յերբորդ ուղիք չե,
այլ յերկրորդը, —դեպի կապիտալիզմ
տանող ուղին։ Վորովհետեւ ի՞նչ և նշա-
նակում վերադառնալ միանձնյա արն-
տեսությանը և վերականգնել կուլակու-

թյունը։ Այդ նշանակում և վերականգ-
նել կուլակային ստրկությունը, վերա-
կանգնել գյուղացիության շահագործու-
մը կուլակության կողմից և իշխանու-
թյունը տալ կուլակին։ Բայց կարելի՞
յե արդյոք վերականգնել կուլակու-
թյունը և դրա հետ միասին պահպանել
Խորհրդային իշխանությունը։ Վո՞չ, չի
կարելի։ Կուլակության վերականգնու-
մը պետք է տանի գեղի կուլակային
իշխանության ստեղծումը և Խորհրդա-
յին իշխանության վերացումը, —հե-
տեւաբար նա պետք է տանի գեղի բուր-
ժուական կառավարության գոյացումը։
Խոկ բուրժուական կառավարության գո-
յացումն իր հերթին պետք է տանի գե-
ղի կալվածատերերի ու կապիտալիստ-
ների վերականգնումը, կապիտալիզմի
վերականգնումը։ Այսպես կոչված՝ յեր-
բորդ ճանապարհն իրոք յերկրորդ ճա-
նապարհն է, կապիտալիզմին վերադառ-
նալու ճանապարհը։ Հապա մեկ հարց-
րեք դյուղացիներին, —ուղում են ար-

դյոք նրամնք վերականգնել կուլակային
սորկությունը, վերադառնալ կասլիտա-
լիզմին, վերացնել Խորհրդային իշխա-
նությունը և վերականգնել կալվածա-
տերերի ու կապիտալիստների իշխանու-
թյունը: Հաղա մեկ հարցրեք նրանց և
դուք կիմանաք, թե վո՞րն ե միակ
ճիշտ ուղին համարում աշխատավոր
գյուղացիների մեծամասնությունը:

Հետևաբար կա միայն յերկու ուղի.
կամ առաջ դեպի վեր—դեպի նորը,
կոլտնտեսային կարգերը, կամ հետ,
դեպի վար—դեպի հինը, կուլակային-
կապիտալիստական կարգերը:

Եերորդ ուղի չկա:

Աշխատավոր գյուղացիությունը ճիշտ
վարվեց՝ մերժելով կապիտալիստական
ուղին և կանոնելով կոլտնտեսային շի-
նարարության ուղու վրա:

Ասում են, թէ կոլտնտեսություննե-
րի ուղին ճիշտ ուղի յէ, բայց նա
դժվարին ե: Դա ճիշտ ե մասամբ մի-
այն: Իհարկե, այդ ճանապարհին դը-

20

վարություններ կան: Լավ կյանքը ձրի
չի ձեռք բերվում: Բայց բանն այն ե,
վոր գլխավոր դժվարություններն ար-
դեն անց են կացված, իսկ այն դժվա-
րությունները, վորոնք կանգնած են
ձեր առաջ, չարժե նույնիսկ, վորպեսզի
դրանց մասին լուրջ իուսենք: Համե-
նայն դեպս՝ համեմատած այն դժվա-
րությունների հետ, վոր ասլրեցին բան-
վորները 10—15 տարի առաջ, ներկա-
յիս ձեր դժվարությունները, ընկեր
կոլտնտեսականներ, յերեխայական խա-
ղալիք են թվում: Այստեղ հանդես յե-
կան ձեր ճառախոսները և դոլեցին լե-
նինդրադի, Մոսկվայի, Խարկովի, Դոն-
բասի բանվորներին: Նրանք ասացին,
վոր նրանք, բանվորները, նվաճումներ
ունեն, իսկ դուք, կոլտնտեսականներդ,
շատ ավելի քիչ նվաճումներ ունեք:
Ինձ թվում ե, թէ ձեր հոետորների
ճառերում նկատվում եր նույնիսկ ըն-
կերական վորոշ նախանձ, թէ՝ վոր-
քա՞ն լավ կլիներ, յեթե մենք, կոլտըն-

21

տեսական զյուղացիներու ել, ունենաւ
յիշք նույնութիւնի նվաճումներ, ինչպիսիք
ունեք դուք, Լենինգրադի, Մոսկվայի,
Դոնիբասի, Խարկովի բանվորներդ...
Այս ամենը լավ է: Խոկ դուք դիտե՞ք,
թե ինչ ևն նստել այդ նվաճումները
Լենինգրադի ու Մոսկվայի բանվորնե-
րին, ինչպիսի զրկունքներ ևն կրել
նրանք, վորպեսզի ձեռք բերեն, վեր-
ջապես, այդ նվաճումները: Յես կա-
րող եյի պատմել ձեզ միքանի փաս-
տեր բանվորների 1918 թվականի կյան-
քից, յերբ ամբողջ շաբաթներով վոչ մի
պատառ հաց չեյին տալիս բանվորնե-
րին, ել չեմ խսում մսի և այլ մննդա-
մթերքների մասին: Այդ շրջանում լա-
վագույն ժամանակներն եյին համար-
վում այն որերը, յերբ հաջողվում եր
Լենինգրադի ու Մոսկվայի բանվորնե-
րին տալ մեկ ութերորդ ֆունտ ու
հաց և այն ել կիսով չափ քուսալ խառ-
նած: Յեվ այդ տեսք վո՛չ թե մի ա-
միս և վոչ ել կես տարի, այլ ամբողջ

յերկու տարի: Բայց բանվորները համ-
րերում եյին և չեյին վհատվում, վո-
րովհետեւ նրանք դիտեյին, վոր կդան
ավելի լավ ժամանակներ և նրանք վըն-
ողական հաջողություններ ձեռք կբե-
րեն: Յեվ ի՞նչ, —դուք տեսնում եք,
վոր բանվորները չսխալվեցին: Դե հա-
մեմատեցեք ձեր զժվարություններն ու
զրկանքները բանվորների ապրած դըժ-
վարությունների ու զրկանքների հետ
և դուք կտեսնեք, վոր զրանց մասին
չարժե նույնիսկ լընորեն խոսել:

Ի՞նչ ե պահանջվում կոլտնտեսային
շարժումն առաջ մղելու և կոլտնտեսա-
յին շինարարությունն ամրող թափուլ
ծալվուելու համար:

Դրա համար ամենից առաջ պահանջ-
վում է, վոր կոլտնտեսություններն ու-
նենան միանդամայն ապահոված և
մշակելու համար պիտանի հող: Ու-
նե՞ք դուք այդ հողը: Այս՝, ունեք:
Հայանի յե, վոր բոլոր լավագույն հո-
գերը հանձնված են կոլտնտեսություն-

ներին . և ամբացված են հաստատագես
նրանց վրա : Հետեւարար, կոլտնաեսա-
կանները կարող են մշակել ու բարե-
լավել այդ հողը, վորքան ուղեն, ա-
ռանց վախենալու, թե նա կընկնի ու-
րիշի ձեռքք :

Եերկրորդ, դրա համար պահանջ-
վում ե, վոր կոլտնատեսականները կա-
րողանան ուգալել արակտորներից
ու մեքենաներից : Ունե՞ք դուք
դրանք : Այս', ունեք : Բոլորին հայտնի
յե, վոր արակտորի մեր գործարաննե-
րը և զյուղատնտեսական մեքենաներ
պատրաստող գործարանները նախ և ա-
ռաջ զլիսավորապես աշխատում են կոլ-
տնատությունների համար, նրանց մա-
տակարարելով ժամանակակից բոլոր
գործիքները :

Դրա համար, վերջապես, պահանջ-
վում ե, վոր կառավարությունն ըստ
ամենայնի ոժանդակի կոլտնատեսական
զյուղացիներին թե' մարդկանցով, թե'
ֆինանսներով և չթողնի, վոր թշնամի

դասակարգերի վերջամնացները (ոօօ-
լունաշի) քայլայեն կոլտնատեսություն-
ները : Ունե՞ք դուք այդպիսի կառավա-
րություն : Այս', ունեք : Նա կոչվում ե
բանվորա-դյուլղացիական խորհրդային
կառավարություն : Մի յերկրի անուն
տվեք ինձ, վորտեղ կառավարությունը
պաշտպանի վո՞չ թե կապիտալիստնե-
րին ու կալվածատերերին, վո՞չ թե
կուլակներին և ուրիշ հարուստների,
այլ աշխատավոր դյուղացիներին : Աշ-
խարհիս յերեսին այդպիսի յերկիր չկա
և չի յեղել : Միմիայն մեղանում, խոր-
հրդային յերկրում գոյություն ունի
մի կառավարություն, վորը սարի պես
կանդնած ե բանվորների ու կոլտնատե-
սական գյուղացիների թիկունքին, քա-
ղաքի ու գյուղի բոլոր աշխատավորնե-
րի թիկունքին, ընդդեմ բոլոր հա-
րուստների ու չափործողների : (Յեր-
կարատկ ծափակարություններ) :

Հետեւարար, դուք ամեն ինչ ունեք՝
կոլտնատեսային շինարարությունը ծա-

վալելու և Հին կազմանքներից կատարեա-
լսակես աղատագրվելու համար :

Ձեզանից միայն մի բան և պահանջ-
վում—աշխատել ազնվորեն, բաշխել
կոլտնտեսության յեկամուտներն ըստ
աշխատանքի, պահպանել կոլտնտեսա-
յին գույքը, պահպանել տրակտորներն
ու մեքենաները, լավ ինտել ձին, կա-
տարել ձեր բանվորաց գյուղացիական
պետության առաջադրանքները, ամբաց-
նել կոլտնտեսությունները և գուրս
վոնդել կոլտնտեսություններից այնուղի-
նացկած կուլակներին ու յենթակուլակ-
ներին :

Դուք յերեի կհամաձայնեք ինձ
հետ, վոր հաղթահարել այդ գժվարու-
թյունները, այսինքն՝ աշխատել ազնվո-
րեն և պահպանել կոլտնտեսային գույ-
քը, —այնքան ել գժվար չե՛ : Մանավանդ
վոր այժմ ձեզանում աշխատանքը կա-
տարվում ե վո՛չ հարուստների և վո՛չ
ել շահագործողների համար, այլ ձեզ,

ձեր սեփական կոլտնտեսությունների
համար :

Դուք տեսնում եք, վոր կոլտնտե-
սային ուղին, սոցիալիզմի ուղին աշ-
խատավոր գյուղացիության համար
միակ ճիշտ ուղին ե :

ՄԵՐ ՄԵՐՁԱՎԱՐՄԱԳՈՒՅՆ ԽՆԴԻԲՆ ԵՇ
ՈՒՆԵՎՈՐ ԴԱՐՁՆԵԼ ԲՈԼՈՐ ԿՈԼՏԸՆ-
ՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ

Ցերկրորդ հարց—ի՞նչ ենք ձեռք բերել մենք նոր ուղու վրա, մեր կուտանտեսային ճանապարհին, և ի՞նչ ենք մտադիր ձեռք բերելու մերձավորագույն 2—3 տարում։

Սոցիալիզմը լավ բան է։ Սոցիալիստական յերջանիկ կյանքն անվիճելիորեն լավ բան է։ Բայց այդ ամենն ապագայի զործ է։ Այժմ զԼիսավոր հարցն այն չե, թե ինչ ձեռք կրերենք մենք ապագայում։ Գլխավոր հարցն այն է, թե ինչ ենք արդեն ձեռք բերել մենք ներկայումս։ Գյուղացիությունը վատք դրեց կոլտանտեսային ուղին։ Այդ շատ լավ է։ Բայց ի՞նչ ձեռք բերեց նա այդ ուղու վրա։ Ի՞նչ չոչա-

փելի բան ձեռք բերինք մենք՝ ընթառալով կոլտանտեսային ուղիով։

Մենք ձեռք բերինք այն, վոր ողնեցինք չքավորների միլիոնավոր մասսաներին մանելու կոլտանտեսությունները։ Մենք ձեռք բերինք այն, վոր չքավորների միլիոնավոր մասսաները, մանելով կոլտանտեսությունները և ողտպելով այնտեղ լավագույն հողից ու արտադրության լավագույն զործիքներից, բարձուացան մինչև միջակների մակարդակը։ Ինք ձեռք բերինք այն, վոր չքավորների միլիոնավոր մասսաները, վորոնք առաջ կիսաքաղց կյանք եյին վարում, այժմ կոլտանտեսություններում դարձել են միջակներ, դարձել են ապահոված մարդիկ։ Մենք ձեռք բերինք այն, վոր խարիսկեցինք գյուղացիների չերտավորում՝ չքավորների ու կուլակների, ջախջախեցինք կուլակներին և ողնեցինք չքավորներին՝ դառնալու իրենց աշխատանքի տերը կոլտանտեսությունների ներսում, դառնալու միջակներ։

ի՞նչ դրություն դոյլություն ուներ
նախքան կուլտնաեսային շինարարության
ժավալում՝ մի չորս տարի սրանից ա-
ռաջ՝ Հարստանում և վեր եյին բարձ-
րանում կուլակները։ Աղքատանում և
ավերվում եյին չքալպրները, ստրուկ
դառնալով կուլակներին։ Դեպի վեր,
դեպի կուլակներն եյին մազլցում մի-
ջակները և ամեն անդամ վայր եյին
դլորվում, լրացնելով չքալպրների շար-
քերը՝ ուրախացնելով կուլակներին։
Դժվար չե գլամի ընկնել, վոր այդ ամ-
բողջ խառնաշվոթությունից շահում ե-
յին միմիայն կուլակները և թերես ու-
նեորներից վոմանք։ Գյուղում յուրա-
քանչյուր 100 տնտեսության կարելի
յեր հաշվել 4—5 կուլակային տնտեսու-
թյուն, 8 կամ 10 ունեոր տնտեսու-
թյուն, 45—50 միջակ և մոտ 35 չքա-
լոր տնտեսություն։ Հետևաբար, գյու-
ղացիական բոլոր տնտեսությունների
առնվազն 35 տոկոսը կազմում եյին
չքալպրները, վորոնք հարկադրված են

յին տանել կուլակային ստրկության
լուծը։ Եւ յես չեմ խսում միջակների
սակավազոր խամերի մասին, վորոնք
կազմում եյին միջակ գյուղացիության
ավելի քան կես մասը և վորոնք իրենց
գյությամբ քիչ բանով եյին տարբեր-
վում չքալպրներից և ուղղակի կա-
խումն ունեյին կուլակներից։

Ծավալելով կուլանտեսային շինարա-
րությունը՝ մենք ձեռք բերինք այն,
վոր վոնչնչացրինք այդ խառնաշվութու-
թյունը և անարդարությունը, ջախ-
ջախեցինք կուլակային ստրկությու-
նը, չքալպրների այդ ամբողջ մաս-
սան ներգրավեցինք կուլանտեսություն-
ները, ապահոված վիճակի մեջ դրինք
նրանց այնտեղ և նրանց բարձրացրինք
միջակների մակարդակին, վորոնք կա-
րող են ոգտվել կուլանտեսային հողից,
կուլանտեսություններին տրված արտո-
նություններից, ոգտվել տրակտորնե-
րից, գյուղատնտեսական մեքենաներից։

Իսկ ի՞նչ ե նշանակում այդ։ Այդ

նշանակում ե, վոր առնվազն քսան մի-
լիոն գյուղացիական բնակչություն,
առնվազն քսան միլիոն չքավորներ մենք
փրկեցինք աղքատությունից ու ավե-
րումից, փրկեցինք կուլակային ստըր-
կությունից և կուտնահսությունների
չնորհիվ դարձրինք ապահովված մար-
դիկ:

Այդ մեծ նվաճում ե, ընկերնե՛ր:
Այդ այնպիսի նվաճում ե, վորպիսին
դեռ չի տեսել աշխարհը և վորին դեռ
չի հասել վոչ մի պետություն աշխար-
հում:

Ահա ձեզ կուտնահսայր չինարա-
բության դորձնական, շոշափելի ար-
դյունքները, այն բանի արդյունք-
ները, վոր գյուղացիությունը վոտք
դրեց կուտնահսությունների ուղին:

Բայց այդ մեր առաջին քայլն ե
միայն, մեր առաջին նվաճումը կու-
տնահսայր չինարաբության ճանապար-
հին:

Սխալ կլիներ կարծել, թէ մենք

ողետք ե կանգ առնենք այդ առաջին
քայլի վրա, այդ առաջին նվաճման
վրա: Վո՞չ, ընկերնե՛ր, մենք չենք
կարող կանգ առնել այդ նվաճման
վրա: Վորպեսզի աւելի սոսաջ չարժ-
վենք և վերջականապես ամբացնենք
կոլտնահսությունները, մենք պետք ե
անենք յերկրորդ քայլը, մենք պետք ե
ձեռք բերենք նոր նվաճում: Վո՞րն ե
այդ յերկրորդ քայլը՝ այդ քայլն ե՝
ե՛լ ավելի վեր բարձրացնել կուտնա-
հսականներին, —թէ՛ նախկին չքավորնե-
րին, թէ՛ նախկին միջակներին: Այդ
քայլն ե՝ ունիոր դարձնել բոլոր կոլ-
տնահսականներին: Այո՛, ընկերնե՛ր,
ունեոր դարձնել: (Յերկարատև ծափա-
հարւրյուններ):

Մենք ձեռք բերինք այն, վոր կու-
տնահսությունների չնորհիվ բարձ-
րացըինք չքավորներին միջակների մա-
կարդակին: Այդ շատ լավ ե: Բայց
այդ քիչ ե: Այժմ մենք պետք ե ձբդ-
տենք այն բոնին, վոր մի քայլ ես

անենք դեպի առաջ և ոգնենք բոլոր
կոլտնտեսականներին, —թե՛ նախկին
չքավորներին, թե՛ նախկին միջակնե-
րին, —բարձրանալու ունեորների մա-
կարդակին: Դրան կարելի յէ հասնել,
և մենք պետք եւ հասնենք զբան՝ ինչ
եւ վոր լինի: (Յերկարատև ծափակա-
րություններ): Այժմ մենք ամեն ինչ
ունենք՝ մեր այդ նովատակին հասնելու
համար: Այժմ վաստ են ոգտագործում
մեր մեքենաներն ու տրակտորները:
Մեր հողը լավ չի մշակվում: Բավա-
կան և միայն բարելավել մեքենաների
ու տրակտորների ոգտագործումը, բա-
վական և միայն բարելավել հողի մշա-
կումը, և մենք կհասնենք այն բանին,
վոր կրկնակի, յեռակի կալելացնենք
մեր մթերքների քանակը: Իսկ այդ
միանդամայն բավական ե՞ բոլոր կոլ-
տնտեսականներին կոլտնտեսային դաշ-
տերի ունեոր աշխատավորներ դարձնե-
լու համար:

Առաջներում ի՞նչ զբության մեջ եք

ունեորների հարցը: Ունեոր գառնալու
համար պետք եք նեղացնել իր հա-
րեաններին, պետք եք շահագործել
նրանց, ավելի թանգ վաճառել նրանց
և ավելի եժան գնել նրանցից, վարձել
բատրակներից վոմանց, կարգին շահա-
գործել նրանց, փոքրիկ կապիտալ կու-
տակել և, այնուհետև ամբանալով,
կուլակ դառնալ: Խսկապես դրանով ել
բացատրվում և, վոր առաջ, միանձնյա
տնտեսության պայմաններում, ունեոր-
ներն անվատահություն ու ատելու-
թյուն եյին առաջացնում չքավորների
ու միջակների մեջ: Այժմ բանն ուրիշ
է: Այժմ պայմաններն ել այլ են: Վոր-
ովեսդի կոլտնտեսականներն ունեոր
գառնան, այժմ ամենեկին չի պահանջ-
վում նեղացնել կամ շահագործել
իրենց հարեաններին: Ասենք՝ հեշտ ել
չե այժմ շահագործել վորեւ մեկին,
վորովհետև հողի մասնավոր սեփակա-
նություն կամ վարձակալություն չկա
այլես մեղանում, մեքենաներն ու

տրակտորները պատկանում են պետությանը, իսկ կապիտալ ունեցող մարդիկ այժմ մոդայից ընկել են կոլտընտեսություններում։ Այդպիսի մոդայեղել ե, բայց արդեն վերացել ե ընդմիշտ։ Վորապեսզի կոլտնտեսականներն ունեոր դառնան, այժմ դրա համար միայն մի բան ե պահանջվում։ աշխատել կոլտնտեսության մեջ ազնվորեն, ճիշտ ոգտագործել տրակտորներն ու մեքենաները, ճիշտ ոգտագործել բանող անսուններին, ճիշտ մշակել հողը, պահպանել կոլտնտեսային սեփականությունը։

Յերբեմն ասում են. թե վոր սոցիալիզմ ե, ել ի՞նչ կարիք կա աշխատելու։ Աշխատում եյինք առաջ, աշխատում ենք այժմ,—մի՞թե ժամանակը չի աշխատելուց դադարել։ Այդպիսի խոսքերն արժանապես սխալ են, ընկերներն թ։ Դա լողեքը փելիսովայությունն ե և վո՞չ թե ազնիվ աշխատողների։ Սոցիալիզմն ամենին չի ժիառում աշ-

խատանքը։ Ընդհակառակը, սոցիալիզմը կառուցվում ե աշխատանքի վրա։ Սոցիալիզմն ու աշխատանքն անբաժանելի յեն միմյանցից։ Մեր մեծ ուսուցիչ կենին ասել ե. «Ով չի աշխատում, նա չի ուսում»։ Ի՞նչ ե նշանակում այդ, ո՞ւմ դեմ են ուղված կենինի խոսքերը։ Շահագործողների դեմ, նրանց դեմ, ովքեր իրենք չեն աշխատում, այլ ուրիշներին են հարկադրում աշխատել և հարստանում են ուրիշների հաշվին։ Ե՞լ ում դեմ։ Նրանց դեմ, ովքեր իրենք լողբություն են անում և ուղում են շահվել ուրիշների հաշվին։ Սոցիալիզմը պահանջում է վո՞չ թե ծուլություն անել, այլ այն, վոր բոլոր մարդիկ աշխատեն ազնվորեն, աշխատեն վո՞չ թե ուրիշների համար, վո՞չ թե հարուստների ու շահագործողների համար, այլ իրենց համար, հասարակության համար։ Յեկյեթե մենք աշխատենք ազնվորեն, աշխատենք մեզ համար, մեր կոլտնտեսությունը ամենին չի ժիառում աշ-

թյունների համար, ապա կհասնենք այն
բանին, վոր մի յերկու-յերեք տարում
բոլոր կոլտնաւեսականներին, թե՛ նախ-
կին չքայլորներին, թե՛ նախկին միջակ-
ներին, կրաքացնենք ունեռքների մա-
կարգակին, այնուիսի մարդկանց մա-
կարդակին, վորոնք ոզավում են մը-
թերքների լիառատությունից և կատա-
րելազն կուլտուրական կյանք են
վարում:

Այդ և այժմ մեր մերձավորագույն
ինդիրը: Գրան մենք կարող ենք հաս-
նել, և զրան մենք ոկտոք և հասնենք
ինչ եւ վոր լինի: (Յերկարասի ծափա-
հարություններ):

3
ԱՌԱՋՔԻՆ ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

իսկ այժմ թույլ տվեք անցնել մի-
քանի առանձին գիտությունների:
Ամենից առաջ գյուղի մեր կուսակ-
ցականների մասին: Զեր մեջ կուսակ-
ցականներ կան, բայց ավելի շատ են
անկուսակցականները: Այդ լազ լազ
է, վոր համազումարին հավաքվել են
ավելի շատ անկուսակցականներ, քան
կուսակցականներ, վորովհետեւ հենց
անկուսակցականներին ոկտոք և նախ և
առաջ զրայիլ գեղի մեր գործը: Կան
կոմունիսաներ, վորոնք անկուսակցա-
կան կոլտնաւեսականներին բոլցելիկորեն
են մոտենում: Բայց կան նաև այն-
պիսիները, վորոնք դուսզանում են ի-
րենց կուսակցականությամբ և մոտիկ
չեն թողնում անկուսակցականներին: Այդ

լավ. չե և վնասակար ե: Բոլցեկիների
 ուժը, կոմունիստների ուժն այն ե,
 վոր նրանք կարողանում են շրջապա-
 տել մեր կուսակցությունն անկուսակ-
 ցական ակտիվի միլիոններով: ՄԵնք,
 բոլցեկիներս, չեյինք ունենա այն հա-
 ջողությունները, վոր ունենք այժմ,
 յեթե չկարողանայինք կուսակցության
 կողմը նվաճել միլիոնավոր անկուսակ-
 ցական բանվորների ու գյուղացիների
 վատահությունը: Իսկ ի՞նչ ե պահանջ-
 վում դրա համար: Դրա համար
 պահանջվում ե, վոր կուսակցականները
 չալատվարվեն անկուսակցականներից,
 վոր կուսակցականները չփակվեն իրենց
 կուսակցական պատյանում, վոր նրանք
 չդուռըանան իրենց կուսակցականու-
 թամբ, այլ լսեն անկուսակցականների
 ձայնը, վոր նրանք վո՛չ միայն սովո-
 րեցնեն անկուսակցականներին, այլև
 սովորեն նրանցից:

Զովետք ե մոռանալ, վոր կուսակցա-
 կանները յերկնքից չեն ընկնում: Պետք
 40

ե հիշել, վոր բոլոր կուսակցականներն
 իրենք մի ժամանակ անկուսակցական են
 յեղել: Այսոր նա անկուսակցական ե,
 իսկ վաղը կուսակցական կդառնա:< Իս-
 կապես ի՞նչ կա այստեղ գոռողանալու:
 Մեր մեջ, հին բոլցեկիներիս մեջ, քիչ
 չեն զտնվի այնպիսի մարդիկ, վորոնք
 կուսակցության մեջ աշխատում են մի
 20—30 տարի: Բայց չե՞ վոր մենք
 ինքներս ել մի ժամանակ նույնպես
 անկուսակցական ենք յեղել: Ի՞նչ կլի-
 ներ մեր բանը, յեթե մի 20—30 տարի
 առաջ մեղ վանելին մեր այն ժամա-
 նակլա կուսակցականները և կուսակ-
 ցությունից հեռու պահելին մեզ: Հնա-
 քալոր ե, վոր այն ժամանակ մենք
 կուսակցությունից բաժանված լինելինք
 մի շաբք տարիներով: Իսկ մենք, հին
 բոլցեկիներս, չե՞ վոր հետին մարդիկը
 չենք, ընկերներ: (Ուրախ աշխատմու-
 թյուն, յերկարատե ծափահարություն-
 եր):

Ահա թե ինչու մեր կուսակցական-
 41

ները, այժմյան յերիտասարդ կուսակ-
ցականները, վորոնք յերբեմն բարձր
են պահում իրենց քիթն անկուսակցա-
կանների առաջ, պետք եւ հիշեն այս
տմենը, պետք եւ հիշեն, վոր վո՛չ թե
դոռողությունը, այլ համեստությունն
ե, վոր զարդարում եւ բոլցեկին:

Այժմ միքանի խոսք կանանց մասին,
կոլտնտեսուհիների մասին: Կանանց
հարցը կոլտնտեսություններում մեծ
հարց ե, ընկերնե՛ր: Յես դիտեմ, վոր
ձեզանից շատերը թերաղնահատում են
կանանց և նույնիսկ ծիծաղում են
նրանց վրա: Բայց այդ սխալ ե, ըն-
կերնե՛ր, լուրջ սխալ: Այստեղ բանը
միայն այն չէ, վոր կանայք կաղմում
են բնակչության կեսը: Ամենից առաջ
բանն այն ե, վոր կոլտնտեսային շար-
ժումն առաջ քաշեց դեկավածը պաշտոն-
ների համար մի շարք յերևելի և ըն-
դունակ կանանց: Դիտեցեք համագու-
մարը, նրա կազմը, և դուք կտեսնեք,
վոր կանայք վաղուց արդեն հետամնաց

վիճակից անցել են առաջավորների
շարքերը: Կանայք կոլտնտեսություն-
ներում մեծ ուժ են: Դրվանի տակ
պահել այդ ուժը՝ նշանակում եւ հան-
ցագործություն թույլ տալ: Մեր պար-
տականությունն ե՝ առաջ քաշել կոլ-
տնտեսություններում կանաց և գործի
դնել այդ ուժը:

Իհարկե, Խորհրդային իշխանու-
թյունը մոտիկ անցյալում փոքրիկ
թյուրիմացություն եւ ունեցել կոլտըն-
տեսուհիների հետ: Բանը վերաբերում
եր կովին: Բայց այժմ կովի հարցը
կարգավորված եւ թյուրիմացու-
թյունը վերացված: (Յերկարածու ծա-
փահարություններ): Մենք կարողա-
ցանք հասնել այն բանին, վոր կոլտըն-
տեսականների մեծ մասն իր տնտեսու-
թյան մեջ արդեն մի-մի կով ունի:
Կանցնի մեկ-յերկու տարի ևս, և դուք
չեք գտնի վոչ մի կոլտնտեսական, վոր
իր կովը չունենա: Մենք, բոլցեկիներս,
կաշխատենք, վոր բոլոր կոլտնտեսա-

կանհերը մէզանում մի-մի կով ունենան: (Յերկարատև ծափահարություններ):

Ինչ վերաբերում և իրենց՝ կույնաեւսուհներին, ապա նրանք պետք եւ հիշեն կոլտնտեսությունների ուժն ու նշանակությունը կանաց համար, պետք եւ հիշեն, վոր միմիայն կոլտնտեսության մեջ նրանք հարավորություն ունեն հավասար վորք մեկնելու տղամարդկանց հետ: Առանց կոլտնտեսությունների՝ իրավունքների անհավասարություն, կոլտնտեսություններում՝ իրավունքների հավասարություն: Թող հիշեն այս մասին ընկեր կոլտնտեսուհները և թող նրանք իրենց աչքի լույսի ողես պահեն կոլտնտեսային կարգերը: (Յերկարատև ծափահարություններ):

Յերկու խոսք կոմյերի խտականների ու կոմյերի խոտեհների մասին կոլտնտեսություններում: Յերիտասարդությունը մեր ապաղան եւ, մեր հույսն եւ, ընկերներ: Յերիտասարդությունը պետք եւ

փոխարինի մեզ, ծերերիս: Նա ուետք եւ հաղթական վախճանին հասցնի մէր դրուը: Գյուղացիների մեջ քիչ չեն այնպիսի ծերեր, վորոնք ծանրաբեռնը լույս են հին բեռով, վորոնք ծանրաբեռնված են հին կյանքի սովորություններով ու հիշողություններով: Հասկանալի յե, վոր նրանց վո՞չ-միշտ եւ հաջողվում հասնել կուսակցության հետեւց, Խորհրդային իշխանության հետեւց: Այլ եւ մեր յերիտասարդությունը: Նա ապատ եւ հին բեռից և նա ամենից ավելի հեշտությամբ և յուրանցում լենինյան պատղամները, և հենց այն պատճառով, վոր յերիտասարդությունն ամենից ավելի հեշտությամբ և յուրացնում լենինյան պատճառով, հենց այդ պատճառով ել նա կոչված եւ առաջ տանելու հետ մնացողներին ու տատանվողներին: Ճիշտ եւ նրան պակասում են զիտելիքները: Բայց զիտելիքները—զրանք ձեռքբերովի բան են: այսոր նրանք չկան, վաղը

նրանք կլինեն։ Ուստի խնդիրն այն է, վոր պետք ե սովորել և դարձյալ սովորել լենինիզմը։ Բնկե՛ր կոմյերիտականներ ու կոմյերիտուհիներ, սովորեցե՛ք բոլոնիզմը և առաջ տարե՛ք տառանվողներին։ Ավելի քեզ չաղակրատեցե՛ք, ավելի շատ աշխատեցե՛ք, և ձեր՝ գործը գլուխ կդա անպայման։ (Մափահարություններ)։

Միքանի խոսք մենատնտեսների մասին։ Մենատնտեսների մասին այստեղ քեզ խոսեցին։ Սակայն այդ չի նշանակում, թե աշխարհում մենատնտես չկա այլևս։ Վո՞չ, չի նշանակում։ Մենատնտեսներ կան և նրանց չի կարելի հաշվից դուրս դցել, վորովհետև նրանք մեր վաղվա կոլտնտեսականներն են։ Յես գիտեմ, վոր մենատնտեսների մի մասը վերջնականապէս ատականվել և և դիմել սովեկուլացիայի։ Յերկի դրանով և բացատրվում, վոր մեր կոլտնտեսականները մեծ ընտրությամբ են ընդունում կոլտնտե-

սությունների կազմի մեջ, իսկ յերբեմն ել բոլորովին չեն ընդունում նրանց։ Այդ ճիշտ է, իշարկե, և այստեղ առարկություն չի կարող լինել։ Բայց կա մենատնտեսների մի ուրիշ, ավելի մեծ մասը, վորն սովեկուլացիայի չի դիմել, այլ իր հացը ձեռք ե բերում աղնիվ աշխատանքով։ Այդ մենատնտեսները թերևս գեմ չլինելին կոլտնտեսություն մտնել։ Բայց նրանց, մի կողմից, խանգարում են իրենց տատանումները՝ կոլտնտեսային ճանապարհի ճշտության նկատմամբ, մյուս կողմից՝ այն խստությունը, վոր գոյություննի այժմ կոլտնտեսականների մեջ մենատնտեսների նկատմամբ։

Իհարկե, պետք ե հստականալ կոլտնտեսականներին և մտնել նրանց դրության մեջ։ Այս տարիներում նրանք շատ վիրավորանք ու ծաղր են տեսել մենատնտեսների կողմից։ Բայց վիրավորանքն ու ծաղրը վճռողական նշանակություն չպետք ե ունենան այս-

տեղ։ Վաս ե այն զեկավարը, վորը չգիտեած մոռանալ վիրավորանքները և վորն իր զդացմունքներն ավելի բարձր ե դասում։ Կոլտնտեսային գործի շահերից։ Յեթե գուք ուզում եք զեկավար լինել, պետք ե կարողանաք մոռանալ առանձին մենատնտեսների ձեզ հասցրած վիրավորանքները։ Յերկու տարի առաջ յետ մի նամակ ստացա Վոլգայի ըրջանի մի այրի գեղջկուհուց։ Նա դանդատվում էր, թե իրեն չեն ուզում կոլտնտեսություն ընդունել, և ինձնից աջակցություն եր պահանջում։ Յես հարցում արի կոլտնտեսությանը։ Կոլտնտեսությունից ինձ պատասխանեցին, թե չեն կարող նրան կոլտնտեսություն ընդունել, վորովհետեւ նա վիրավորել ե կոլտնտեսային ժողովը։ Ինչո՞ւմն ե բանը։ Բանն այն ե, վոր գյուղացիների այն ժողովում, վորտեղ կոլտնտեսականները մենատնտեսներին կոչ ե յին անում մըտնելու կոլտնտեսությունն, նույն այդ այրին, բանից գուրս ե գալիս, ի պատեղ։

տասիան այդ կոչին, բարձրացրել ե իր վիճերը և ասել ե՝ ա՛յ, առեք ձեզ կոլտնտեսություն։ (Ուրախ աշխաւմություն, ծիծալ)։ Անկասկած, նա սխալ ե վարդել և վիրավորել ե ժողովը։ Բայց մի՞թե կարելի յե մերժել նրան կոլտնտեսության մեջ ընդունել, յեթե նա մի տարի հետո անկեղծորեն զգացացել ե և ընդունել իր սխալը։ Յես կարծում եմ, վոր չի կարելի նրան մերժել։ Յես այլպես ել զրեցի կոլտնտեսությանը։ Այսուն ընդունեցին կոլտընտեսության մեջ։ Յել ի՞նչ։ Դուրս յեկավ, վոր նա աշխատում ե ներկայումս կոլտնտեսության մեջ վո'չ թե վերջինների, այլ առաջինների շարքերում։ (Ծափահարություններ)։

Ահա ձեզ մի որինակ ել, վորը խոսում ե այն մասին, վոր զեկավարները, յեթե նրանք ցանկանում են իսկական զեկավարներ մնալ, պետք ե կարողանան մոռանալ վիրավորանքները, յեթե այդ պահանջում են գործի շահերը։

Նույնը պետք ե ասել նաև մենա-
տնտեսների մասին առհասարակ։ Յես
դեմ չեմ, վոր կոլտնտեսություն ըն-
դունեն ընտրությամբ։ Բայց յես դեմ
եմ, վոր անխոտիր բոլոր մենատնտես-
ների առաջ փակեն կոլտնտեսություն-
ների ճանապարհը։ Դա մեր, բոլը կե-
կյան քաղաքականությունը չե։ Կոլտըն-
տեսականները չպետք ե մոռանան, վոր
նորերս իրենք ել մենատնտեսներ են
յեղել։

Վերջապես, միքանի խոսք Բեզենչու-
կի կոլտնտեսականների նամակի մասին։
Այդ նամակը տպագրված եր, և դուք
յերեկի կարդացել եք այն։ Անվիճելիո-
րեն լավ նամակ ե։ Նա վկայում ե,
վոր մեր կոլտնտեսականների մեջ քիչ չեն
կոլտնտեսային գործի փորձված ու դի-
տակից կաղմակերպիչներն ու աղիտա-
տորները, վորոնք մեր յերկրի պար-
ծանքն են։ Սակայն, նամակում կա մի
սխալ տեղ, վորի հետ վոչ մի կերպ չե
կարելի համաձայնել։ Բանն այն ե, վոր

Բեղենչուկի ընկերները կոլտնտեսու-
թյան մեջ կատարած իրենց աշխատան-
քը պատկերում են վորպես մի համեստ
ու համարյա աննշան աշխատանք, իսկ
հոետորների ու առաջնորդների աշխա-
տանքը, վորոնք յերբեմն յերեք արշի-
նանոց ճառեր են ասում, մեծ ու
ստեղծագործ աշխատանք։ Կարելի՞ յե
արդյոք համաձայնել դրա հետ։ Վո՛չ,
ընկերներ, դրա հետ վոչ մի կերպ
համաձայնել չի կարելի։ Բեղենչուկի
ընկերներն այստեղ սխալ են թույլ
տվել։ Հնարալոր ե, վոր նրանք հա-
մեստությունից են թույլ տվել այդ
սխալ։ Բայց դրանից սխալը չե
զաղարում սխալ լինելուց։ Անցել են
այն ժամանակները, յերբ առաջնորդ-
ները համարվում եյին պատմության
միակ ստեղծողները, իսկ բանվորներն
ու գյուղացիները հաշվի չեյին առ-
նըլում։ Ժողովուրդների և պետու-
թյունների բախար հիմա վճռում են
վո՛չ միայն առաջնորդները, այլ ամե-

նից առաջ և զլխավորապես՝ աշխատավորների միլիոնավոր մասսաները։ Բանվորներն ու դյուղացիները, վորոնք առանց աղմուկի և ճարճատյունի կառուցած են գործարաններ ու ֆաբրիկաներ, հանքահորեր ու յերկաթուղիներ, կոլտանեսություններ, սուեդում են կյանքի բուլոր բարիքները, կերակրում ու հաղցընում են.ամրող աշխարհին,—ահա թէ ովքեր են նոր կյանքի խօկական հետասներն ու ստեղծողները։ Այս մասին, ինչպես յերկում ե, մոռացել են Բեղենչուկի մեր ընկերները։ Լավ չե, յերբ մարդիկ գերազնահատում են իրենց ուժերը և սկսում գոռողանալ իրենց ծառայություններով։ Այդ տառում ե գեղի պարձենկոտություն, իսկ պարձենկոտությունը լավ բան չե։ Բայց ավելի վաս ե, յերբ մարդիկ սկսում են թերազնահատել իրենց ուժերը և չեն տեսնում, վոր իրենց «համեստ» ու «աննկատելի» աշ-

խատանքն իրոք հանդիսանում է մեծություն ու սուեղծագործ աշխատանք, վորը վճռում է պատմության բախտը։

Յես կցանկանայի, վոր Բեղենչուկի ընկերներն իրենց նամակի նկատմամբ արված իմ այս փոքրիկ ուղղմանը հավանություն տային։

Յեկե՛ք, ընկերնե՛ր, վերջացնենք սրանով։

(Յերկար ժամանակ չդադարող ծափակարություններ, վորոնք փոխվում են ովացիայի։ Բոլորը վոտքի յեն կանգնում և փողունում են ընկ։ Ստալինին։ Ազադակներ՝ «Ուոա՛»։ Դահլինում լսվում են բացականչություններ —«Կեցցե՛ ընկ։ Ստալինը, ուոա՛։ Կեցցե՛ սուազավոր կոլտմտեսականը։ Կեցցե՛ չեր առաջնորդ ընկեր Ստալինը»։



Հայ. թարգմ. Խմբ. Բ. Մարտիրոսյան
 Տեխ. Խմբ. Ա. Խաչատրյան
 Սրբագրիչ. Հ. Մանվելյան
 Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Գլամիկի լիազոր № Կ-3269, երաժ. № 547,
 Պատվեր № 40, տիրած 5,000,
 Հանձնված և առաջրության Յ. Յ. 1938 թ.
 Ստորագրված և ապագելու 26. Յ. 1938 թ.
 Գիբը 25 կ., կազմը 1 ո'
 Պետրաս - կուսակցական հաղաքական
 գրականության բաժնի տպարան
 Երևան, Ալավերդյան 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0180055

